Մրցույթի մասնակցության հրավեր «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ն, «ԷյԷսԲի» Հայաստան կազմակերպության հետ համագործակցությամբ և BMZ-ի ֆինանսավորմամբ «Փախստականների և ընդունող համայնքների հզորացում. աշխատաշուկայում մրցունակության բարձրացում և ակտիվ աջակցություն կայուն ինտեգրման համար (ELSI, 2025-2029)» բազմամյա ծրագրի շրջանակներում հրավիրում է հավատարմագրված Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) հաստատություններին մասնակցելու մրցույթի: Ծրագրի նպատակն է Հայաստանի մարզերում փախստական և ընդունող համայնքների խոցելի կանանց համար ապահովել բարձրորակ, ներառական և աշխատաշուկային համապատասխան մասնագիտական ուսուցում: Դիմող հաստատությունները պետք է ունենան գործող հավատարմագրում, ՄԿՈՒ փորձառություն, որակավորված դասընթացավարներ, համապատասխան ենթակառուցվածքներ և մատչելիություն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Ուսուցման ուղղությունները ներառում են՝ SS, հաշվապահություն, հյուրընկալություն, խոհարարություն, գեղեցկության ոլորտի ծառայություններ, կար ու ձև, շինարարություն, գյուղատնտեսություն և այլ մասնագիտական ոլորտներ: Մրցույթի պայմաններին ծանոթանալու և մրցութային փաթեթ ստանալու համար կարող եք դիմել՝ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի կենտրոնական գրասենյակ 2025թ. դեկտեմբերի 29-ից կամ անցնել հետևյալ հղումով, ներբեռնել փաստաթղթերը, լրացնել դրանք և բերել կամ ուղարկել կենտրոնական գրասենյակ՝ **https://drive.google.com/.../1NY.../view**... Մրցութային փաթեթի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվում՝ 2026թ. հունվարի 16-ը 17:30: Խնդրում ենք նկատի ունենալ, որ հետադարձ կապ կհաստատենք միայն հաջորդ փուլ անցած մասնակիցների հետ: Տեղեկությունների համար՝ +374 96 00 27 70 hermine.paytyan@missionarmenia.org **drive.google.com**